



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

887

205
u-59

1860

2010

1
2
1

ԸՆԶՆԱՔՆՆՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ՔՆՆԻ ԻՆՔՁԻՆՔԳ ԹԻ ԱՐԳԵՕՔ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԵՍ

Թի որ դարձի չգտի . . . երբնից Ռաֆայելայան
Ինչու Քիստոսի չհրահեմ : Մարտի . յ. Ը . 3 :



ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՆԱՍԵԱՆ

205
A-59

1860



Ա. Հիմա դարձի գալուն բնութիւնը քեզի պիտի ցուցունեմ. այսինքն թէ որն է դարձի չգալն՝ ու որն է դարձի գալը :

Քու քրիստոնէութիւն դաւանելէ դարձի գալ չէ : Պօղոս առաքեալ կ'ըսէ "Չէ թէ խօսքով է՝ հասցա զօրութիւնով" : Ա կորնթ . Գ 20 : Սարգիկէի ու Վաւորիկէի մէջ կային մարդիկներ՝ որ կը դաւանէին թէ Քրիստոնեայ են, ու կենդանութեան անուն մը ունէին. բայց միայն անուն մը ունենալուն համար Քրիստոս անոնք դատապարտեց : Յայտ . Գ :

Քու Վերստեմ ըլլալէ դարձի գալ չէ : Հաս մարդիկ մկրտուեցան, բայց սրբութենէ զուրկ էին : Չար Մանիան ու Սափորան՝ երկուքն ալ մկրտուած էին, բայց յանկարծական մահուամբ զարնուելով՝ իրենց մեղացը մէջ մեռան : Միմոն Սոգը մկրտուած էր. և տակաւին մաղձի դաւնութեան, և անիրաւութեան կապերու մէջ կը մնար : Աւր որ քրիստոնէութիւնը երկրի մը դաւանած կրօնքն է, քրիստոնեայ ըսուած շատերը՝ միայն անոր անունը ունին, ու չէ թէ Քրիստոսի բնաւորութիւնները :

Մէկ դաստիարակութիւն ճշ դարձի գալ չէ : Դաստիարակութիւնը՝ քեզ կրնայ վայելուչ կերպով ազնուացընել քու կենցաղախարութեանդ մէջ, բայց քու սիրտդ չկրնար փոխել : Յովաս շատ բարեպաշտ կ'երևնար իր ազգականին (Յովհադային կենդանութեան ժամանակը. բայց իր բարի դաստիարակը մէջ տեղէն վերնալէն ետե՛նինքզինքը մէկէն ՚ի մէկ կուսպաշտութեան տալով շուտով իր ինչ հոգի ունենալը ցուցուց : Գ թափ . ԺԲ :

Կրօնէն արդարեւ դարձութիւնները ճշ դարձութեամբ, և բոլոր շնորհաց փնջներուն թրութեամբ

էր զձեռն ինչ, դարձի գալ չէ: Պօղոս՝ դարձի գալէն առաջ անգամ, կրնար ըսել թէ խիստ օրինապահ աղանդին համաձայն կեանք վարեց, ու ամէն բանի մէջ աղէկ խղճմտանք ունէր և օրէնքին արդարութեանը նայելով անմեղ էր: Փարիսեցիները արտաքին բաներու մէջ ընդհանրապէս այնչափ ճիշդ էին, որ շրէից մէջ հասարակաց բերանը առածի պէս եղեր էր որ եթէ երկու հօգի միայն երկինքը երթալու ըլլան՝ մէկը փարիսեցիներէն պիտի ըլլայ. և տակաւին յայտնի է որ մեր Տէրը անոնք գովելու տեղը, անոնց Վայ, վայ, վայ ձեզի ըսաւ:

Ընդէ մտնելուներէն ու պղծութիւններէն՝ զգաստութեան ու կանոնաւոր վարմանի մը դասնալը, դարձի գալ չէ: Ապարը շատ տարբեր ձեւերու կրնայ թափուիլ, բայց տակաւին ան վար մետաղն է: Ըսանկ ալ մարդը կրնայ շատ փոփոխութիւն ստանալ, դրսուանց երևնալու կոշտ մեղքեր գործելէն բարեկարգութեան դառնալ, ու աշխարհի ապականութիւններէն փախչիլ, և տակաւին սիրտը նորոգուած չըլլալ: Հերովդէս ուրախութեամբ մտիկ ըրաւ Յովհաննէս մկրտիչին՝ և կը յարգէր անիկայ, ու անոր բերանը կը նայէր, և անկէ լսելով՝ շատ բաներ կ'ընէր. բայց և այնպէս դարձի գալու չհասաւ:

Մեղաւոր ըլլալուն վրայ խորունկ համոզութիւն, և խղճմտանքին սուր ու կոշտացիլ դանձանք, դարձի գալ չէ՝ թէ որ նոյն զգացմանց տէրն եղող անձը անկէց աւելի առաջ չերթայ: Փարաւոն, Ըքաբ Փելիքս, Սիմոն մոգը, և մինչև անգամ Յուդան՝ խղճմտանքի սաստիկ ահուդողին մէջն էին: Ըսքաշած նեղութիւննին շատ անգամ անպտուղ կ'ըլլայ, ու գոփոքին նախկին մէկ ճաշակը կու տայ:

Աստուծոյ խօսքին զօրատոյ Կարողութենէն . կամ
 'Արիւնքին մասնաւոր Կարողութենէն պատ-
 ճարեալ սրբին ազդոս շարժմանով , միշտ դարձի
 գալու կայանք չեն տօր : Կարելի է որ աղէկ բա-
 ներու ետեւ շատ զօրաւոր փափաք ունենան , և
 նմանապէս ալ մինչև անգամ դարձի չեկածները
 անոնցմէ մեծ զուարճութիւն զգան . ինչպէս որ
 անանկ է ան մարդոցը վիճակը՝ որոնց համար Տէ-
 րը կ'ըսէ . "Վնոնք ամէն օր իս կը փնտռեն . և
 իմ ճամբաներս գիտնալու և Աստուծոյ մօտենալու
 կը փափաքին" : Եսայ . ԾԸ . 2 : Եւ կարելի է
 որ մեծ ուրախութիւն ալ ունենան մեր Տէրոջը
 պատմած ունկնդիրներուն պէս , որոնք ուրախու-
 թեամբ ընդունեցին խօսքը , բայց արմատ չունէին
 իրենց մէջը , ուստի նեղութեան ու հալածանաց
 ատենը չորցան :

Որովհետև ասանկ մէկ ամենակարևոր նիւթի
 մը մէջ խաբուիլ պիտի չուզէիր , քննէ թէ երկ-
 նից ու փրկութեան վրայով ունեցած յոյսդ ինչ
 բանի վրայ հիմնուած է : Քրիստոնեայ ըլլալ դա-
 ւանի՞լդ է , մկրտուած ըլլա՞լդ , կրօնական դաստի-
 արակութի՞ւնդ , զգաստութի՞ւնդ , գործիդ մէջ
 աշխոյժ ըլլա՞լդ , առուտորիդ մէջ արդար ու ան-
 խարդախ ըլլա՞լդ , կրօնական պարտաւորութիւն-
 ներդ կատարե՞լդ , կամ երբեմն մտքիդ մէջ մեղ-
 քի վրայ ունեցած տրամաւթի՞ւնդ : Քեզի Տէրո-
 ջը խօսքովը կրնամ հաստատ վկայել , որ աս ջա-
 տագովութիւնները Աստուծոյ ատեանին առջևը
 ընդունելի պիտի չլլան : Բոլոր ադ բաները՝ որ
 չափ աղէկ ալ որ ըլլան , չին ապացուցանիր որ
 դարձի եկած ես , ու քու փրկութեանդ բաւա-
 կան չեն :

Բայց իրենք իրենց անձին համար սյուշափ բան

մը ըսելու կարող եղողները՝ թէ որ դարձի եկած չեն սեպուիր, հապա ի՞նչ պիտի ըլլայ բացէ՛ ՚ի բաց ու յայտնի մեղաւորներուն վիճակը: Ո՛հ թէ որ դուն ասանկ մէկն ես, գիտնալու ես որ Մատուծոյ թագաւորութենէն հեռի՝ խիստ հեռի ես: Արնայ՝ ըլլալ որ մարդ մը քաղաքավարեալ ըլլայ, ու տակաւին դարձի եկած չըլլայ: Ուրեմն ո՞ւր պիտի երևնայ բացէ՛ ՚ի բաց անասուածը, և ծանր մեղքի մէջ եղողը: Արնայ՝ ըլլալ որ իմաստուն կոչսերուն հետ ընկերանայ մէկը, ու դոնէն դուրս մնայ. և ուրեմն յիմարներուն պսիւնքն մեղաւորներուն ընկեր եղողը ալ աւելի պիտի չկորսուի: Թէ որ մէկը՝ իր ընկերներուն հետ ունեցած բոլոր գործառնութիւններուն մէջ ուղիղ և արդար ըլլալով, տակաւին Մատուծոյ առջև չկրնայ արդարանալ. ուստի դուն ի՞նչ պիտի ըլլաս: Ո՛հ խորհէ՛ շուտով և բոլորովին Մատուծոյ դառնալու վրայ. եթէ ոչ՝ անօրէնութիւնը քու կործանումդ պիտի ըլլայ: Տերօջը ետեէն եղիր իր ներող և նորոգող շնորհքը ընդունելու համար. և մի՛ դադարիր մինչև որ Մատուած կատարեալ փոփոխութիւն մը ընէ քու վրայ. վասն զի դուն ուրիշ մարդ մը ըլլալու ես, նոր մարդ մը Վրիստոսով. եթէ ոչ՝ յաւիտեանս կորուսեալ մարդ մը պիտի ըլլաս:

Իայց հիմա քեզի խկապէս ցոյց պիտի տամ թէ ի՞նչ է դարձի գալը:

Քո սրտիդ մէջ ընդհանրական փոփոխութիւն մը ըլլալու է, ու նաև քո կենացդ մէջն ալ: Ես փոփոխութիւնը մարդուն մէջ իր մտքին ու իր բոլոր վարուցը մէջ բոլորովին կը թափանցէ: Էին մարդը մէկդի հանուած է. նոր մարդը կը հագնի, ու բոլոր բաները նոր կ'ըլլան:

1. Վարձի եկողին իմացականութիւնը կը լուսաւորէ, անանկ որ ատեն մը խաւար եղողը՝ Տէրոջ մով լոյս կ'ըլլայ : Աստուծոյ գիտութեամբը կը լուսաւորի : Անոր անարատ մաքրութիւնը, ու մեզքը կատարելապէս ատենն ու անկէ զգուիլը, և մեզքը պատժելուն կողմանէ անսահման արդարութիւնը, անոր անսահման գիտութիւնը՝ զօրութիւնը՝ և բարութիւնը, անոր ամենակարողութիւնը՝ և ուրիշ փառաւոր կատարելութիւնները, ինչպէս որ Սուրբ Վրոց մէջ յայտնուած են՝ զօրաւոր կերպով իր մտքին մէջ կը թափանցեն : Հիմա ինքը կը տեսնայ անոնք՝ որ առաջ միայն լուսած էր :

Իր իմացականութիւնը կը լուսաւորի նաև ձեռքն գիտութեանը կողմանէ : Հիմա մեղաւորը մէկ չափով մը՝ մեզքը բուն իր յատկութիւններովը կը տեսնայ՝ որ չարիքներուն ամենէն գէշն է, ու չափազանց չար . թէպէտև առաջ՝ միայն քիչ մը չարիք կը տեսնար անոր մէջ : Ա՛հ իր առջի սիրական ցանկութիւնները ինչ այլանդակ հրէշներ կ'երևան : Թէ որ իր աջ աչուրներն ըլլային, պիտի հանէր . ու թէ որ աջ ձեռուրներն ալ ըլլային, անոնք կտրելու հաւանութիւն պիտի տար : Կը տեսնայ մեղքին մէջն եղած անտեղութիւնը, անիրաւութիւնը, և գարշելիութիւնը, ու Աստուծոյ առջին որչափ ատելի և անարգելի ըլլալը, և թէ՛ որչափ մնասակար ու ապականիչ է իր հոգւոյն . անանկ որ ինքը կը զարհուրի անկէ, կը զգուի անկէ, ու կը փախչի . և ինք իր անձը այնչափ երկար ատեն Տէրոջը դէմ պատերազմելուն, ու իր ծոցը ասանկ ապականիչ բանը պահելուն համար, մէկ մեծ յիմարի մը տեղ կը դնէ :

Իր իմացականութիւնը կը լուսաւորի ինչպէս

գիտնալուն կօղմանէ : Ընառակը հիմա ինքզինքին եկաւ , ու իբրև թէ ներսի դին անհամար աչք կտրած է . կը տեսնէ որ իր սիրտը չար է , ու անոր ակտը գիտէ և կը զգայ : Ար տեսնայ որ իր ինկած բնութիւնը ինչպէս սաստիկ ապականեալ է : Բոլոր իր կեանքին օրերը անոր մէջ , Ըստուծոյ և իր Սուրբ օրինացը դէմ ինչ թշնամութիւն կայ . ասոնք տեսնելով՝ ալ ինք իրմէն կը զլուի : Ըն որ առաջ իր ներսի դին քիչ մեղք կար կը սեպեր ու Ըստուծոյ առջևը խոստովանելու արժանաւոր մէկ քանի յայտնի մեղքերէն ի զատ բան մը չէր գտներ , հիմա իր բոլոր հոգւոյն մէջի խորին և ընդհանուր ապականութիւնը կը տեսնէ . կը զգայ որ իր սիրտը ամէն բանէն աւելի խաբեբայ է , և սաստիկ չար . անանկ որ ալ կը սկսի կանչել . «Պիղծ , պիղծ եմ . ո՛վ Տէր լուա իս բոլորովին իմ մեղքերէս , ու իմ ներսի դիս մաքուր սիրտ մը ըստեղծէ» : Բոլոր իր ըրածներուն վրայ «Ինչ կը գրէ . կը տեսնէ իր սրտին մէջի անէծքը , գողութիւնը , սպանութիւնը և շնութիւնը , որոնց վրայ առաջ տգէտ էր : Ի՞նչպէտև առաջ վտանգ մը չէր տեսներ , բայց հիմա իր յաւիտեան կորսուած ըլլալը կ'երզակացընէ՝ թէ որ շնորհաց զօրութեամբը շնորոգուի :

Ըսկէ զատ իր միտքը կը լուսաւորի Քրիստոսի գիտութիւնովը : Մինչև հիմա Քրիստոսի վրայ կերպարանք մը կամ վայելչութիւն մը՝ ոչ ալ անկէ ակտրոջելու երևոյթ մը չտեսաւ . բայց հիմա Յիսուս Քրիստոսի վրայ մէկ գերազանց արժէք մը , ու չափազանց փառք մը և վսեմութիւն մը կը գտնէ՝ որ բոլոր ստեղծուածներուն մէջ եղած գերազանցութիւնները կը մթընցընէ՝ ինչպէս որ արևը ելլելուն աստղերը կը ծածկուին : Ըն-

նոր մէջ անսահման ճոխութիւն մը կը տեսնէ՝ որ բոլոր իր կարօտութիւնները լեցնելու, իր անմահ հոգւոյն անսահման փափաքները կատարելու բաւական է. և աս բանը հաստատ որոշում ընել կու տայ իրեն, որ Քրիստոսի՝ և միայն անոր հաւատայ, իբրև իր յաւիտենական բաժինը:

Հիմա իմ սիրելի ընթերցողս, քննէ դուն քեզ փորձէ՛ քու սիրադ: Ընդեօք քու միտքդ ալ ասանկ լուսաւորո՞ւած է: Իմ հիմակուան խօսած բաներուս փորձառութիւն ունի՞ս:

2. Գարձի եկողին կամքը կը նորոգուի, և Լսողութեան կամայքը կը հպարտակի: Որ և իցէ աղէկ բան մը ընելու ամենևին յօժարութիւն չունենալը, և դժկամակութիւնը կ'անցնի: Չարէն հաստատ զըզուելու, և բարիին հակամիտութիւն և յօժարութիւն մը կը հաստատուի իր ներսը: Հիմա ան մարդը՝ նոր նպատակներ ու գիտաւորութիւններ ունի. և ամէն բանի մէջ իր գիտաւորութիւնը Լստուած փառաւորել է: Յիսուսը կ'ընտրէ իբրև իր Տէրը. ու աս իր ընտրութիւնը՝ վախով մը ըրած չէ, ինչպէս որ մեռնելու վրայ եղող մեղաւոր մը՝ Քրիստոսի հաւատալ կ'ուզէ, միայն որ դժօրիք չերթայ. թէև մեղքը ճշմարտապէս չատեր ու ո՛չ ալ անկէ ազատիլ կ'ուզէ: Գարձեալ՝ իբրեն շաւիղ ըլլալու համար, սրբութեան ճամբան կ'ընտրէ: Լստուծոյ խոստումներն ալ՝ չէ թէ իրեն գերութեանը, այլ ժառանգութեանը՝ և յաւիտենական ժառանգութեանը համար կ'ընդունի: Չէ թէ միայն Քրիստոսի լուծը կը կրէ, այլ անիկայ հաճութեամբ վրան կ'առնէ: Ինչաւ ուրիշ մէկ ժամանակ մը՝ կրօնական կրթութեան մէջ անցուցած ժամանակէն աւելի ուրախութեամբ չանցընէր:

Հիմա իմ բարեկամս՝ քանի որ առաջ երթաս, աս բանը քու խղճմտանքիդ հարցուր թէ՛ դուն ճիշդ աս կերպով նորոգուած ես արդեօք : Իրաւ որ երջանիկ մէկը պիտի ըլլաս, թէ որ քու վիճակդ ասանկ ըլլայ . բայց նայէ որ դուն քեզ հաւատարմութեամբ քննես :

3. Գարձի գալուն ատենը՝ յօժարութիւններուն ընթացքը փոփոխած է՛ ըլլայ : Գարձի եկողին մեծ փափազը չէ թէ հարստութեան ետեւէ է, այլ շնորհաց : Ընկիայ անօթի ու ծարաւ է անոր, աւելի կ'ընտրէ շնորհայի ըլլալ՝ քան թէ մեծ . աւելի կ'ուզէ աշխարհիս մէջ ամենէն սուրբ ըլլալ՝ քան թէ ամենէն գիտնական, ամենէն հռչակաւոր և ամենէն աւելի յաջողութեան մէջ : Եւսմանակ մը թերևս ասանկ ըսելու պատրաստ էր . «Ո՛հ թէ որ ես միայն մեծ յարգ ունենայի, հարստութիւն ունենայի, և հաճոյքներս կատարելու մէջ լողայի . թէ որ պարտքերս վճարուած ըլլային, ու ապրուստս հոգացուէր, երջանիկ պիտի ըլլայի» : Իայց հիմա իր լեզուն փոխուած է : «Ո՛հ» կ'ըսէ ինքը, «թէ որ միայն ճշմարիտ քրիստոնեայ մը ըլլայի, թէ և աղքատ ու անարգ՝ ինքզինքս երջանիկ պիտի սեպէի» : Ինթերցող, արդեօք ա՞ն է քու սրտիդ խօսքն ալ : Գարձի եկած մարդը՝ կ'ուրախանայ Ըստուծոյ վկայութիւններուն ճամբուն մէջ՝ ամէն տեսակ հարստութիւններէն աւելի : Տէրոջը օրէնքին մէջ կ'ուրախանայ, որուն համար քիչ մը առաջ ախորժակ չունէր : Վրիստոսի վրայ խորհրդածութիւն՝ ու անոր ժողովորդոցը հետ ընկերութիւն ընելուն պէս ուրախութիւն մը չունի հիմա :

Իր հոգեւրջ փոխուած են : Ընաջ՝ գլխաւորապէս աշխարհի վերաբերեալ էին . ոչ ալ հոգւոյն

գործքերուն քիչիկ մը ժամանակ կու տար : բայց հիմա ինք կը կանչէ, «Ի՞նչ ընելու եմ որ փրկուիմ» : Իր երկիւղները տարբեր են : Ըստն մը՝ աշխարհային բարիքները, կամ աշխարհին՝ ու իր բարեկամներուն սէրը կորսնցընելուն պէս ուրիշ վախ մը չունէր . ցաւ քաշելուն, աղքատութեան ու երեսէ իյնալուն պէս սոսկալի բան մը չկար իրեն : Բայց հիմա ասոնք իր աչքին՝ Ըստուծոյ երեսէն իյնալուն, կամ անոր անհաճոյ ըլլալուն հետ չին կրնար բաղդատուիլ : Չորս դին նա յելով և զգուշաւոր կերպով կը քայլէ որ մեղքը իրեն չհասնի : Ըստուծոյ շնորհքը կորսնցընելուն վրայ խորհիլն անգամ՝ սիրտը ցաւով կը լեցընէ : Ըշխարհիս մէջ բնաւ մէկ խորհրդածութիւն մը այնքան ցաւ չտար իրեն՝ քան որչափ Քրիստոսէն զատուիլը :

Ընթերցող, արդեօք քու կամբդ որոշակի հաստատուած է առ Ըստուած՝ Քրիստոսով, ու արդեօք քու փափաքներդ ան ըրած որոշմունքիդ համաձայն են : Մարդուն վրայ՝ դարձի գալուն ատենը եղած փոփոխութիւնը, Բոլոր էր կարող-ինններուն վրայ ներգործութիւն ունի : Ընոնք՝ որ առաջ մեղքի գործիք էին, հիմա արդարութեան գործիք կ'ըլլան : Ըն՝ որ առաջ իր մարմինը կը պղծէր, հիմա իր անօթը սրբութեամբ և պատուով՝ բարեխառնութեան և զգաստութեան մէջ կը պահէ, ու միայն Տէրօջը կը նուիրէ :

Իարձի գալը՝ մարդուն Բոլոր կենացը և գործերուն կ'ազդէ : Ըոր ընթացք մը կը բռնէ : Իր կենցաղավարութիւնը երկինքն է : Արբոր Ըստուած անոր նոր սիրտ մը տայ, ու իր օրէնքը անոր մտքին վրայ գրէ, անմիջապէս իր պատուիրանքներուն մէջ կը քայլէ ու իր գաաատաննե-

ըր կը պահէ: Թէպէտ և մեղքը կրնայ ըլլալ որ իր մէջը բնակի, բայց ալ անկէ ետև անոր վրայ իշխողութիւն չունի: Իր պտուղը ունի սրբութիւնով, մէկ մեծ յարգ մը կը զգայ Մատուցոյ բոլոր հրամաններուն վրայ, և խղճմտանքին կը հարցընէ ան բաներուն վրայով՝ որն որ ոմանք չնչին մեղք մը, կամ սնոտի պարտաւորութիւն մը կը սեպեն: Այլ հիմա իմ սիրելի ընթերցողս՝ աղէկ քննէ քու սիրտդ ու կեանքդ, և քու խղճմտանքիդ նայէ՝ թէ արդեօք դարձի գալուն բնութեանը վրայ նկարագրածիս պէ՞ս է քու վիճակդ ու քու փորձառութիւնդ ալ՝ թէ ոչ:

Արովհետև բնաւ յոյս չունիմ երկինքը քու երեսդ տեսնելու՝ թէ որ աս աշխարհիս վրայ եղած ատենդ դարձի չգաս, (Տես Մատ. Ժ. 3.) և որովհետև մեծ վտանգ կ'ըլլի որ բնական վիճակիդ մէջ մնալու գոհ պիտի ըլլաս ու Մատուցոյ ողորմութիւնն ու շնորհքը ընդունիլ յուսաս՝ առանց բոլորովին փոխուելու և նորոգուելու իր շնորհքովն ու Հոգիովը, ուստի ձեռք կը զարնեմ հիմա ապացուցանելու,

Բ. Դ՛ր՛նք Բացարձակապէս հարեալս ըլլալը:

1. Առանց ասոր քու երկնայէ պարսպ է. փասն զի դուն ինչ վախճանի համար որ ստեղծուեր ես, անոր չես ծառայեր: Այ՞ որ Մատուցոյ քեզ ստեղծեց՝ քու հոգիդ ու մարմինդ, բոլորովին իրեն ծառայելու համար. բայց առանց դարձի գալու՝ ոչինչ վախճանի համար ապրած կ'ըլլաս. այո՛ և մանաւանդ թէ շատ գէշ վախճանի մը համար. բոլոր քու զօրութիւններդ ու կարողութիւններդ այնչափ ապականած են ան անկողին պատճառովը՝ որ մինչև որ մեռած գործքերէն

չմաքրուիս, կենդանի Մատուծոյ ծառայութիւն չես կրնար ընել: Զորքացած անձը կարելի չէ որ Մատուծոյ գործքը գործէ. վասն զի բնաւ անոր խելքը չհասնիր, և ամենեին ալ անոր հակամիտութիւն չունի: Առանց դարձի գալու՝ դուն շատ գէշ վախճանի համար կ'ապրիս. չնորոգուած սիրտը "Պիղծ թռչուններու վանդակ մըն է", ու ապականութիւնով լեցուն "գերեզման մը": Իսկ ըրր քու անդամներդ ու զօրութիւններդ անիրաւութեան գործիք են, ու Սատանային ծառաները: Դուն՝ շարունակ Մատուած անպատիւ ընելու, և անոր դէմ պատերազմելու հետ կ'ըլլաս: Ա՛հ ասիկայ իր ձեռացը գործքերը ինչպէս շարաշար գործածել է:

2. Առանց դարձի գալու քու կրօնական պարտաւորութիւններդ ու կարգաւորութիւններդ, ուրիշ մէկէն բուրդին ունայն են. վասն զի անոնք ոչ կրնան Մատուծոյ հաճոյ ըլլալ, ոչ ալ քու հոգիդ փրկել:

3. Իսկը որ յոյսերդ ունայն են: Քու յոյսերդ հոս մէկ հաստատուն միտթարութեանէ մը դուրի են. վասն զի ալ աղէկ կ'ըլլայ բոլոր քու ու կորներդ իրենց խաղերէն ելած ատենը, հանգըստութիւն յուսալ քան թէ ճշմարիտ հրջանկութիւն՝ քանի որ քու մեղացդ մէջն ես: Եւ այսուհետեւ փրկութեան յոյս ունենալդ ալ ունայն է: Թերեւս դուն ըսել ուզես թէ, "Կամ յոյսս Քրիստոսի վրայ է. ես բոլոր իմ վատահոսութիւնս Մատուծոյ վրայ կը դնեմ, և ուստի փրկուելուս երկբայութիւն չեմ ընեմ": Իսկ այն առանց վերստին ծննդեան երկինքը երթալ յուսալը. Վերստի սուտ վարդապետի մը անիլ զնելու պէս է: Ամ. Գ. 3: Կաւթիթին բողբըլ աս


էր. «Քու խօսքիդ կը յուսամ». բայց քու յոյսըդ իր խօսքին հակառակ է: Ղուն չես կրնար ցոյց տալ ինձի Քրիստոսի մէկ խօսքը՝ որ երկինք երթալու յոյս մը տայ քեզի, քանի որ քու չարութիւններուդ մէջ կը շարունակես: Ըստուած զզուելով կը մերժէ ասանկ յոյսերը: Եւայ. ԽԸ. 1, 2: Ղուն պիտի հարցընես հիմա. «Կուզե՞ս արդեօք որ ես յուսահատիմ»: Ը. յո՛ւ. պէտք է որ չնորոգուած վիճակիդ մէջ երկինքը երթալու ամէն յոյսերը բռլարովին մէկ գի ձգես: Ըռանց սուրբ ըլլալու ոչ երբէք երջանկութեան պէտք է որ յուսաս: Ի՛նչ պէտք չէ որ ամենեին յուսահատիս ողորմութիւն գտնելուդ վրայ, թէ որ զղջաս ու Ըստուծոյ դառնաս ոչ ալ զղջումի և գարձի դալուդ վրայ յուսահատելու ես, թէ որ Ըստուծոյ սահմանած միջոցները ՚ի գործ դնես:

4. Ըռանց գարձի գալու՝ Բոլը Քրիստոսի Եւաճնէրը թելէ համար ունայն պէտի Եւայ: Եւ. Ե. Ե. 8: ՏԻ. Բ. 14: Քու փրկութեանդ համար օգուտ մը պիտի չընէ: Ա՛յ երստին ծննդեան ատենը առանց շօգուցն գործակցութեանը՝ Քրիստոսի փրկագործութեան արդիւնքէն օգուտ մը չես կրնար քաղել: Եւ ընդ հակառակն կրնալ կարծելը՝ իր խորհուրդներուն գէժ կ'եղէ, քանզի ինք կարգադրած է որ մարդիկ միայն սրբացուելով փրկութիւն ստանան: Քրիստոս մէկը իր շօրը կամացը հակառակ ճամբով մը պիտի չփրկէ. և Ըստուծոյ կամքը աս է որ մենք սրբանանք: Ա՛յ Ե. Գ. 3:

5. Քու մեղացդ մէջ եղած ատենդ քեզ փրկելը Ըստուծոյ սորոքիչ և հակառակ պիտի գար: (Ա) Ի՛ր սրբաբանները. վասն զի Ըստուծոյ արդարութեանը գատաստանը ամէն մէկուն իր գործո-

ցը համեմատ հատուցում ընելուն վրայ կը կայա-
 նայ : Ի այց թէ որ մարդիկ մարմնոյն ցանելու ըլ-
 լան, և տակաւին յաւիտենական կեանք քաղե-
 լու ըլլան, Մտուծոյ արդարութեան փառքը ո՛ւր
 պիտի ըլլայ . որովհետև մեղաւորին՝ արդարին գոր-
 ծոցը համեմատ տուածի պէս պիտի ըլլար : (2) Իր
 որբութեանը : Թէ որ Մտուած մեղաւորները
 չէ թէ միայն փրկէր, այլ անոնք իրենց մեղացը
 մէջ մնալով փրկէր, իր սրբութիւնը պիտի աւ-
 րուէր : Իր բնութեանը անսահման սրբութեան ա-
 նհրաւութիւն եղած կ'ըլլար ասանկը իրեն հետ
 բնակեցընելը : Թէ որ Ղաւթիմ չէր զիմանար իր
 տանը մէջ կամ իր աջացը առջև տեսնելու ,
 Սող. ՃԱ. 3—7, կրնա՞ս մինչև անգամ մըտ-
 քէդ անցընել որ Մտուած ասանկը իր ներկա-
 յութեանը ընդունի : (3) Իր ճշմարտութեանը . վասն
 զի Մտուած երկինքէն յայտնեց՝ որ եթէ մէկը
 ըսէ, «Թէ և իմ սրտիս յամառութեանը մէջ քա-
 լեմ, ինձի խաղաղութիւն կ'ըլլայ, Տէրը պիտի
 չհաճի անոր խնայելու, հապա ան ատենը Տէ-
 րոջը բարկութիւնը ու նախանձը ան մարդուն վը-
 րայ պիտի բորբոքի, և աս գրքիս մէջը գրուած
 ամէն անէճքը անոր վրայ պիտի իջնէ, ու Տէրը
 անոր անունը երկինքին տակէն բնաջինջ պիտի ը-
 նէ : Ի Օրհն. ԻԹ. 19, 20 : Եւսև Մտուած կը
 յայտնէ ալ թէ, ան՝ որ «Իր ընդը ելէ, սուրբ
 ձեռք և մաքուր սիրտ ունենալու է» : Սող. ԻԳ.
 3, 4 : Ուստի ի՞նչպէս Մտուած ճշմարիտ կրնայ
 ըլլալ թէ որ աս ամէն ըսածներուն շնայելով, ա-
 ռանց դարձի գալու՝ մարդիկը երկինք առնելու ըլ-
 այ : (4) Իր Իմաստութեանը . վասն զի ասիկայ՝ իր
 ամենէն մեծ ողորմութիւնները անոնց յարգը չը-
 քիտցողներուն առ կ'ըլլայ : Չսրբացած մեղաւորը

Մտուծոյ մեծ փրկութեանը վրայ շատ քիչ ար-
 Ժէք կը դնէ : Եւ Մտուծոյ անսահման իմաստու-
 թեանը ամենեւին համաձայն չգար հոգևոր շնորհ-
 քը ընդունելու ստիպել անանկները՝ որոնք որ չա-
 փազանց շնորհակալ չեն ըլլար : Ասե իր իմաս-
 տութեանը վրայ նախատինք մը բերել կ'ըլլայ .
 ըստ որում մեղաւորները իր շնորհքը ընդունելու
 պատրաստութիւն չունին : Մտուծոյ իմաստութիւ-
 նը կ'երևայ ամէն բաները մէկ մէկու հետ յար-
 մարցընելուն կողմանէ . միջոցները՝ նպատակնե-
 րուն , ու շնորհքին որպիսութիւնը՝ առնողին ըն-
 դունակութեանը յարմար ըլլալով : Էիմա թէ որ
 դարձի չեկած անձ մը երկինքը տանէր , ճիշդ ի-
 րաց բնութեանը նայելով՝ կարելի չէր անոր և ոչ
 քիչիկ մը անգամ հոն երջանիկ ըլլալը : Թէ որ երկ-
 նային աշխարհին զբօսանքները մեղաւորներուն աս
 տեղ զուարճութիւն զգացած բաներէն բաղկանա-
 յին , թէ որ ան տեղի վայելքը աշխարհային հա-
 ըրստութիւններ՝ հաճոյքներ ու պատիւներ ըլլա-
 յին , թէ որ ան տեղի պարապմունքը աս ներկայ
 կենաց զբօսանքներն ըլլային , ան ատենը կրնային
 հոն մէկ կերպ մը զուարճութիւն ունենալ . թէ-
 պէտ և ասանկով ալ ճշմարիտ հաստատուն եր-
 ջանկութիւն չէին կրնար ունենալ . բայց աս բա-
 ները երկինքը ամենեւին տեղ չունին : Են վիճա-
 կին երջանկութիւնը՝ Մտուծոյ ստորագիւտացը և
 անոնց արարչագործութեան՝ նախախնամութեան
 և մասնաւորապէս փրկագործութեան մէջ յայտ-
 նութեանը վրայով խորհրդածելուն վրայ կը կա-
 յանայ : Ուստի «Տէրը տեսնալ» կ'ըսուի՝ իբրև
 վիճակ գիտութեան ու ընդունելի ըլլալու Մտու-
 ծոյ , և մըջանջենաբար անոր ծառայելու և զինքը
 փառարանելու : Ետը համար է որ փառարանու-



Թիւնը՝ ընդհանրապէս իբրև երկնային զօրաց պարապմունք կը կոչուի: Վալու աշխարհին մէջի զբաղումները ասոնք են. և ասոնց մէջ գերագոյն երջանկութիւն չգտնողները, երկինքն ալ չեն կրնար գտնալ: Վայց աս բաները՝ անսուրբ մարդու մը ճշմարիտ մէկ հաճութիւն մը չեն կրնար ընծայել. սուրբ Մատուած մը՝ իրենց ուրախութիւն տալու տեղը, սարսափելու առարկայ մը պիտի ըլլայ, ու անոր ծառայելը՝ ձանձրութիւն, ինչպէս որ հիմա ալ անանկ կ'ըլլայ: Թէ որ հիմա քու կենցաղավարութիւնդ երկրի վրայ է, ու չէ թէ երկինքին մէջ. թէ որ հիմա զգայարանաց հաճոյքներովը կ'ապրիս. թէ որ հիմա՝ քու մարմինդ ու հոգիդ սուրբ և Մատուծոյ ընդունելի կենդանի սպտարագ մը նուիրելու տեղը, յիմար ու մնասակար ցանկութիւններու կը ծառայես, թէ որ հիմա ժամանակի ունայնութիւններուն մէջ երջանկութիւն կը փնտռես. թէ որ հիմա Մատուծոյ ժողովուրդէն կը զզուիս և անոնց ընկերութենէն կը փախչիս. թէ որ հիմա՝ ճշմարիտ քրիստոնեայի մը մաքուր՝ սուրբ և երկնային բնաւորութիւն մը ունենալու տեղը, աշխարհային և զգայական կիրքեր կը տիրեն վրադ, ստոյգ գիտնաս որ Մատուծոյ օրհնեալ ներկայութեանը ընդունուելիք չունիս. դուն անոր մօտենալու բացարձակապէս անընդունակ ես. ճշմարիտ քրիստոնեաներուն երջանկութեանը վրայ իրական գաղափար մը չես կրնար ունենալ. դուն՝ կոյրի մը տեսութեան գեղեցկութենէն, կամ խուլի մը ձայնի ներդաշնակութենէն զգացած զուարճութիւններէն աւելի չես կրնար զգալ: (Ծ) Մնագարձ մեղաւորներուն, երկինք ընդունուելը՝ Մատուծոյ ափնագիրոտ-իւտանը, ափնախարոտ-իւտանը, անփոփոխելի ափնանը դէմ պիտի ըլլար: Արկնային

վճիռը աօ է որ «Սրտով մաքուր եղողները Մտուած պիտի տեսնեն»: Մատթ. Ե 8: Հիմա՛ թէ որ Քրիստոս անդարձները երկինք տանելու ըլլար, առանց Մտուածոյ գիտութեանը բնելու էր. ո՞ւր պիտի մնար ուրեմն անոր ամենագիտութիւնը՝ թէ որ անոր կամքին դէմ ըլլար, ո՞ւր պիտի մնար ուրեմն իր ամենակարողութիւնը. կամ թէ անիկայ իր կամքը փոխելու էր, և ան ատենը ո՞ւր պիտի մնար իր անփոփոխելի ըլլալը: Մէջ ինչպէս ունայն և յիմարական, ինչպէս անպատշաճ և արտառոց, ինչպէս չար և հայհոյական է ուրեմն քու երկինք երթալու յոյսդ՝ առանց աս աշխարհիս մէջ վերստին ծնանելու և դարձի գալու:

6. Քրիստոսի քեզ քու մեղքերուդ մէջ փրկելը՝ իր Խօսքին գէմ պիտի ըլլայ: Մն՝ որ ինքը բուն ճշմարտութիւն է, ըսաւ. «Թէ որ դարձի չգար, երկնից թագաւորութիւնը բնաւ պիտի չը մտնէր»: Մատթ. ԺԸ. 3: Եւ դարձեալ՝ «Թէ որ չապաշխարէք, պիտի կորսուիք»: Ղուկ. ԺԳ. 3: Մէկը պիտի խորհի որ՝ Քրիստոսի մէկ խօսքը բաւական ըլլալու է. բայց քանի քանի հեղ, որչափ ստիպմամբ կը կրկնէ. «Ղճմարիա ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, թէ որ մէկ մարդ մը նորէն չծնանի, չկրնար Մտուածոյ թագաւորութիւնը տեսնել: Գուն մի՛ զարմանար որ քեզի ըսի, Պէտք է ձեզի նորէն ծնանիլ: Յով. Գ. 3. 7: Եւ դուն տակաւին ուղղակի Քրիստոսի բուն իր խօսքին դէմ քու ունայն յոյսդ ու յանդուգն վստահութիւնդ ամուր կը բռնես»:

Բայց չէ թէ միայն իր թագաւորութեանը օրէնքին բողոքովին դէմ պիտի երթայ՝ քու աս վիճակիդ մէջը թէ որ քեզ փրկելու ըլլայ, այլ նաև իր Երդո՞ւն գէմ: Ինքը երդում ըրաւ որ՝

տգիտութեան, անհաւատութեան, անապաշխարութեան ու անհնազանդութեան մէջ շարունակողները, իր հանգիստը պիտի չմանեն: ԱՅՐ. Գ. 18: Եւ նորհաց ուխտը երդումով մը հաստատուած է, ու արիւնով կնքուած: ԱՅՐ. Զ. 17: Մատթ. ԻԶ. 28: Բայց ամէնը պարագայ եղած ըլլալու է, թէ որ դուն չսրբացած ապրելով ու մեռնելով՝ փրկուիս:

Եւստուած արդարեւ պիտի ցուցնէ թէ ինչ մեղքը կ'առի, ան նոյն ատենը՝ որ պաշտօնարան մեղաօրինելի ողորձութեանը կը ցուցնէ: Աւտի ան՝ որ Տէրոջը անունը ճշմարտագէտ կ'անուանէ, անիրաւութենէ մէկ դի կը կենաց և բոլոր ամբարշտութիւնը կ'ուրանայ. և ան՝ որ Քրիստոսի միջոցով կեանք ունենալ կը յուսայ, ինքզինքը կը մաքրէ՝ ինչպէս որ անիկայ մաքուր է. ապա թէ ոչ Քրիստոս մեղքը սիրող կարծուած պիտի ըլլայ: Բայց ամէն մարդու պիտի գիտցնէ որ ինքը թէ և մեղքի թողութիւն կուտայ, բայց բնաւ անիկայ չքաջաբերի:

Բայց նաև քրիստոսի օրհորհորութեանը մէջ Քրիստոսի ունեցած բոլոր պաշտօններուն դէմ կ'ըլլայ: Եւստուած անիկայ Իշխան և փրկիչ ըլլալու բարձրացուց՝ ապաշխարութիւն և մեղաց թողութիւն տալու. և երկուքին ալ դէմ գործած պիտի ըլլար՝ թէ որ մարդիկ իրենց մեղաց մէջը փրկելու ըլլար: Իշխանի մը կամ թագաւորի մը պաշտօնն է՝ շարութիւն ընողներուն վախ տալ, և աղէկութիւն ընողներուն գովութիւն: Ինքը Եւստուծոյ սպասաւորն է, վրէժխնդիր՝ բարկութիւն հասցընելու. չար գործողին սրայ: Լիմա թէ որ Քրիստոս՝ ամբարշտութեան մէջ շարունակողին պաշտպան ըլլար, ու անոնք իբե՛ն հեթ մեղաօրինաւոր:

որոնք որ անոր իրենց շրայ Բաբառուէլը չէին ուզեր՝
 ասիկայ բողոքովին իրեն պաշտօնին դէմ պիտի լը-
 լար: Ա՞ր թագաւորը բացէ 'ի բաց թշնամի եղող
 ապստամբները իր արքունիքը պիտի առնէր: Այլ
 որովհետեւ Քրիստոս թէ որ աս բանը ընելու ըլ-
 լար, Իշխան պիտի չըլար, անանկ ալ Փրկիչ պի-
 տի չըլար. վասն զի իր փրկութիւնը աստուածա-
 յին է. ինքը կ'ըսուի "Յիսուս. քանզի անիկայ իր
 ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ", ա-
 նանկ որ՝ եթէ անոնք իրենց մեղացը մէջ փրկե-
 լու ըլլար, ո՛չ թագաւոր՝ ո՛չ ալ Փրկիչ կ'ըլլար:

Ա՛հ քեզի ի՞նչ եղաւ՝ ո՛վ խորունկ քնացող,
 ելի՛ր քու Աստուծոյդ աղաղակէ՛, որ չկորսուիս:
 Արթնցի՛ր ո՛վ անհոգ մեղաւոր, չըլլայ որ քու չա-
 րութիւններուդ մէջ կորսուիս: Խորոտներուն պէս
 ըսէ. "Թէ որ հոս մնանք, պիտի մեռնինք": Դ
 թագ. է. 4: Իբաւ որ դժոխքէն դուրս ըլլալդ,
 քիչ ատենէն հոն ըլլալդ աւելի ստոյգ չէ՛ թէ որ
 չապաշխարիս ու դարձի չգաս: Կամ դանախու
 ես, և կամ պիտի կորսուիս: Ի՞նչպէս դուն քու
 ուղեւորդ կորստեանդ պատճառ պիտի ըլլաս, թէ
 որ սակաւին կարծրացընես ինքըզինքդ քու մեղա-
 ւոր վիճակիդ մէջ մնալու: Թէ որ բանական մարդ
 ես՝ ու չէ՛ թէ անբան արարած մը, կանկ առ՝ ու
 մտածէ՛ թէ ո՞ւր կ'երթաս: Թէ որ դուն մարդ-
 կային բանականութիւնն ու իմացականութիւնը ու-
 նիս՝ բաց աչքով դժոխքին բոցերուն մէջ վաղելու
 մի՛ համարձակիր. մամա՛ դուն քեզի և Տէրօջ Ան
 խնդրէ՛ դարձի գալդ: Ի՞նչ ըսել է. մարդ ըլլայ
 մէկը՝ և իր կամօքը դժոխքը երթայ. որ ընդհա-
 կառակն անբաններն անգամ վտանգի մը մէջ բռնի
 կը ձգուին: Ի՞նչ զարմանալի բան է որ բանա-
 կանութեամբ դարբարուած մէկը՝ մահուան, գը-

Ժողովին և Մենակարողին վրէժխնդրութեանը հետ խաղայ: Յաւիտենական տանջանքէն փախչելու չե՞ս արտորար: Թող աս մասին բանականութիւնդ քեզ յաղթէ: Բանաւո՞ր բան մըն է արդեօք անսահման մեծութիւն ունեցող Մատուծոյ հետ հակառակիլ, անոր խօսքին դէմ ինքզինքդ կարծրացընել Բանաւո՞ր բան մըն է արդեօք որ կաւէ շինուած ամաններու կտորուանքները իրենց Շինողին դէմ դնեն: Բնթերցո՞ղ, հանդարտ պիտի նստի՞ս տեղդ՝ մինչև որ Մատուծոյ բարկութեան հոսանքը վրադ գայ, ու քեւ յաւիտենական թշուառութեան Ովկիանոսը ընկղմէ: Արդեօք քեզի աղէկ կ'ըլլայ՞ որ փորձես թէ՛ Մատուած իր տուած խօսքին պէս կ'ընէ՞. ու սիրտդ խտացընես ունայն մտացածին կեղծէքով՝ թէ ամէն բան աղէկ պիտի ըլլայ քեզի, քանի որ տակաւին շարքացած կը մնաս: Ա՛հ, խելացնոր մեղաւորներ, ի՞նչ պիտի ընեն այցելութեան օրը, ու օգնութեան համար որո՞ւ պիտի գիմեն: Ըսայ. Ժ. 3: Ի՞նչ զօրաւոր կերպով մեղքը անոնց միտքը յափշտակեց: Ի՞նչտոր աս աշխարհիս աստուածը անոնց աչուրները տիրապէս կուրցուց: Ի՞նչ հզօր մոլորութիւն է: Ի՞նչպէս կարծր է իրենց սրտերը: Երբեմն կը մտածեմ՝ որ Մատուծոյ ողորմութիւնը պիտի կակուղցընէ, ու իր հըրապուրիչ հրաւերը անոնց յաղթէ. բայց անոնք իրենց եղածին պէս կը մնան. երբեմն ալ կը մտածեմ որ Մատուծոյ սպառնալիքը անոնք պիտի համոզէ. բայց ոչ ալ ասոնք բան մը կը կատարեն: Ա՛վ Տէր Մատուած, վերէն քու օգնութիւնդ խրկէ՛: Քու ողորմութեանդ ու քու սիրելի Արդւոյդ համար՝ զթա ասիկայ կարգացողներուն հոգւոյն, ու իրենք յաւիտենական կրակէն փրկէ:

Որպէս զի չըլլայ որ ամենէն վտանգաւոր և կործանիչ սխալմունք մը ընես, երևակայելով թէ դարձի եկած ես՝ քանի որ դեռ չես եկած, հիմա քու առջևդ պիտի գնեմ:

Գ. Գարնի շէկաններու նշանները: Պօղոս առաքեալը մեղաւորներու սոսկալի ցուցակ մը կուտայ մեզի, որն որ կ'աղաչեմ քեզի որ բոլոր ուշադրութեամբ մտիկ ընես: "Մտիկայ իմանալով զիանաս, որ ամէն պոռնիկ՝ կամ պիղծ՝ կամ ազահ՝ որ կուսպաշտ է, Քրիստոսի ու Մատուծոյ թագաւորութեանը մէջ ժառանգութիւն չունի: Զըլլայ որ մէկը ձեզ խաբէ փուճ խօսքերով. ինչու որ աս բաներուն համար Մատուծոյ բարկութիւնը կու գայ անհնազանդութեան որդւոցը վերայ": Եփե. Ե. 5, 6: "Չէ՞ք գիտեր որ անիրաւները՝ Մատուծոյ արքայութիւնը պիտի չժառանգեն. մի՛ խաբուիք, ո՛չ պոռնիկները՝ ո՛չ կրոնապաշտները՝ ո՛չ շնացողները՝ ո՛չ իգացեալները՝ ո՛չ արուագէտները՝ ո՛չ դողերը՝ ո՛չ ազահները՝ ո՛չ գինովները՝ ո՛չ նախատողները ու ո՛չ յափըշտակողները՝ Մատուծոյ թագաւորութիւնը սիտի չժառանգեն: Ա. Կորնթ. 2. 9, 10: "Իսոյց վախկոտներուն՝ ու անհաւատներուն՝ և պիղծերուն՝ ու մարդասպաններուն՝ ու պոռնիկներուն՝ և կախարդներուն՝ ու կոստապաշտներուն՝ և բոլոր սաախօսներուն բաժինը՝ կրակով ու ծծումբով վառած լիճին մէջը պիտի ըլլայ, որ է երկրորդ մահը": Հայտ. ԻԱ. 8:

Կան ուրիշ դարձի չեկած անսուրբ անձինք ալ՝ որ իբր թէ ասանկ յայտնի կերպով ճակատնուն վրայ չեն կրեր իրենց նշանները, այլ գաղտնի իրենց ձեռքին մէջն է: Մտնք շատ անգամ կը խաբեն ինքզինքնին ալ՝ ուրիշներն ալ, ու քրիս-

տոնէի և աղէկ մարդու տեղ կ'անցնին՝ քանի որ դեռ սրտերնին չար է: Եւ շատերն ալ՝ առանց երևան ելլելու կ'անցնին, մինչև որ մահն ու դատաստանը ամէն բան երևան հանէ: Միտք բեր իմ բարեկամս. շատերը կը կորսուին անանկ մէկ մեղքով մը՝ որ չէ թէ միայն ուրիշներէն ծածկուած է, այլ մինչև անգամ իրենցմէ ալ՝ իրենց սըրտերնին չքննելնուն համար:

Էրեւեալները ան որեսոյ ծածոսի մեղքերէն մէկ բաննէն են՝ որոնցով հարբիկ կորուստը կ'երևան:

1. Տգիտութիւնը աս մեղքերէն մէկն է: Ո՛հ աս մեղքը խաւարի մէջ քանի՛ քանինները կը մեռցնէ՝ քանի որ իրենք կը խորհին թէ աղէկ սիրտ ունին ու երկնից ճամբուն մէջն են: Ինչ պատճառանք ալ որ ընես քու տգիտութեանդ համար՝ աս աղէկ գիացիր որ հոգեկորցս չարիք մըն է: Շշմարտութեան Լստուածք կ'ըսէ թէ ոմանք՝ որ իր ժողովուրդն են կ'ըսէին, «Վիտութիւն չունենալնուն համար բնաջինջ եղան»: Ո՛վ. Գ. Ծ: «Քանզի անիկայ իմաստուն ժողովուրդ չէ. ուստի անիկայ ստեղծողը անոր վրայ պիտի չգծայ ու անիկայ կազմողը անոր պիտի չողորմի»: Երայ. ԻԷ. 11: Օգո՛յշ եղիր որ չլայ թէ քու վիճակդ ալ ասանկ ըլլայ. ու ալ այսուհետև քու տգիտութեանդ համար պատճառանքներ մի՛ ըներ:

2. Աերբը Վրէստոսի գալու իողմանէ Բաղարի կերպով եր գոհել: Ոմանք շատ բաներ կ'ընեն, բայց ինքզինքնին բողբոլին անոր չեն տար: Լաճոյական մեղք մը ունենալու են. գաղտնի բացառութիւններ ալ ունին՝ կենաց, կամ ազատութեան, կամ ստացուածքի կողմանէ:

3. Միտայնութիւն, կամ կրօնէի արդարեւ Բաները միայն կորսելով Բանականաւ: Շատերը

կրօնքին զուրսի կողմին և իրենց պարտաւորութիւններուն զրսուանց կատարմանը վրայ կ'ապահինին . և աս բանը շատ անգամ սաստիկ կը խաբէ և յայտնի մեղքն աւելի ստոյգ կերպով իրենք կը կորսնցընէ , ինչպէս որ փարիսեցւոց եղաւ : Ընտնք ճշմարտութիւնը կը լսեն՝ ծով կ'պահեն՝ աղօթք կ'ընեն՝ ողորմութիւն կու տան , ու անոր համար կը հաւատան թէ իրենց վիճակը ազէկ է : Ղուի . ԺԸ . 11 , 12 : Ար ընդ հակառակն՝ աս արտաքին բաներուն մէջ մնալով , ու կրօնքին զօրութիւնը իրենց ըսյ չազդեցլով , երկնից ճամբուն մէջն լլալու իրենց ինքզինքնին խաբած յոյսերնին՝ ու հաստատ համոզումնին , իրենց մահուանէն ետև ոչինչը իսի ելլէ : Մատթ . է . 22 , 23 : Ա՛յ սոսկալի վիճակ . երբոր մարդու մը կրօնքը զինքը կարծրացընելու և իրօք իր հոգին խաբելու ծառայէ :

4. Ընտնական որդարութիւն : Երբոր մարդիկ իրենց անձին արդարութեանը վրայ վստահ կ'ըլլան , ասով՝ Յիսուս իրենց փրկիչն ըլլալը կը մերժեն : Ա՛վ իմ սիրելի բարեկամս , աս բանին վրայ շատ արթուն ըլլալու կարօտ ես . վասն զի չէ թէ միայն քու մեղքդ , հապա քու պարտաւորութիւններդ կատարելու վրայ ապահինելդ ալ քեզ կըրնայ կործանել . որովհետև քու անձնական արդարութիւնովդ Ըստուծոյ անսահման արդարութիւնը հաճեցընել՝ ու անանկով թողութիւն առնել երևակայելդ , Քրիստոս իր պաշտօնէն հանել և քու պարտաւորութիւնդ կատարելդ , ու ըրած գործքերդ փրկիչ մը ընել է :

5. Ընտնական որդարութեան դիմելը՝ դարձի չեկած սիրտի մը մէկ ստոյգ ապացոյցն է : Մատթ . Ժ . 22 : Յու . Բ . 14—16 : Ըս մեղքը շատ ան-

գամ Վրիստոնէական յօժարամիտ դաւանութեանը գեղեցիկ երևոյթն տակ պահուլտած կ'ըլլայ : Անոր մէջ անանկ մէկ խաբելու զօրութիւն մը կայ որ շատ անգամ թէև որչափ ալ որ ուրիշները կրնան տեսնել ան տեսակ մարդուն աշխարհասէրը ըլլօլը, ինքը անիկայ չտեսներ . բայց աշխարհին ետէէն երթալուն համար՝ սյնքան պատճառանքներ ու պատրուակներ ունի որ իր աչուրները կը կուրցընէ ու ինք իր անծը խաբելով կը կորսուի :

6. Ախալալ-Նիւն ունենալ անոնց դէմ որ կը հարձու-ին ին իրենց զեսս ըրած են : Արօնասէր մարդիկներ սեպուիլ ուզողներէն շատերը ուզողակի Մեծտարանին կանոնին՝ Վրիստոսի օրինակին ու Մատուծոյ բնութեանը դէմ իրենց սրտին մէջ ռի կը պահեն, ու չարին տեղը չար կը հատուցանեն : Աս տեսակ մարդիկը մաղձի դառնութեան ու թշուառութեան վիճակի մէջ են :

Ա՛յլ ընթերցող, ասոնցմէ բան մը քեզի չճշտուի : Ա՛հ քննէ, ու քննէ՛ նորէն՝ ու քու սրտիդ հետ սաստիկ կերպով դատաստանի մտիր Մատուծմէ վայ կայ քեզի՝ թէ որ կամաւոր տգիտութեան մէջ գտնուիս, արտաքին կրնական բաներուն գոհ ըլլաս . քու անծիդ վրայ վատահ ըլլաս՝ աշխարհասիրութեան մէջ ընկղմած կամ չարութեամբ թունաւորուած . թէ որ ասոնցմէ մէկը քու վիճակդ ըլլայ՝ ստոյգ է որ դուն դարձի եկած չես :

7. Մարգարտանալիւն : Թէ որ մարդոց գովելը Մատուծոյ գովեստէն աւելի կը սիրես, ստոյգ է որ տակաւին քու մեղացդ մէջն ես : Թէ որ բնաւ չտեսար ու չողբացիր քու սրտիդ ամբարտաւանութեանը վրայ, Մատուծոյ դարձած ըլլալու տեղը, անոր դէմ ապստամբ ես : Աս մեղքը շատերուն սրտին մէջ կը տիրէ՝ որ իրենք չեն գի-

տեր, ու իրենք իրենց անձին ամենևին տեղեակ չեն : Յովհ. Թ. 40 :

Տ. Հեշտութեան ետևէ եղողը՝ Մատուցող կենդանւոյն մեռած է : Մտիկայ ուրեմն շատ մէկ գէշ նըշան մըն է : Թէ որ մարմինին իր ազատութիւնը տաս, թէ որ փոխանակ ուրանալու և սանձելու՝ փայփայես և ուղածն ընես, թէ որ քու գուարձութիւնդ՝ զգայարանացդ ուղածը կատարելն է, կըրօնքին ո՛ր կերպարանքը որ կ'ուզես ունեցիր՝ Տէր Յիսուսին չես ծառայեր, այլ սառագիւ դարձի չեկած մէկն ես : Հովհ. Թ. 2. 18 : Ը. Տ : Ընոնք որ Քրիստոսինն են՝ իրենց մարմինը խաչը կը հանեն, և հոգ կը տանին որ յաղթեն անոր, զսպեն անիկայ իբրև իրենց թշնամին : Գալ. Ե. 24 :

Մարմնաւոր ապահովութիւնը, կամ ենթադատութեամբ արդէն ինքզինքը ապահով վիճակի մէջ ըլլալ յուսալը, շատ վտանգաւոր է : Եւ տաւրը կ'ըսեն թէ խաղաղութիւն և ապահովութիւն է, նոյն ատենը որ կորուստը յանկարծ անոնց վրայ կը հասնի : Եւ տաւրը կ'ուզեն, և մինչև անգամ հաստատ միտքերնին կը դնեն ինքնիրեննին յուսալու, շատ թեթև հիմ մըն ալ ունենալով՝ թէ իրենց վիճակը աղէկ է, ու անոր համար ալ փոփոխութիւն մը չեն փնտռեր՝ ու ասանկով իրենց մեղացը մէջ կը կորսուին : Խաղաղութեան մէջ ես : Ի՞նչ հիման վրայ հաստատած ես ատիկայ : Սուրբ Վրոց խաղաղութիւնն է արդեօք : Քու հոգւոյդ բնաւորութեանդ՝ խօսակցութեանդ և կենցաղաւարութեանդ մէջ ճշմարիտ հաւատացեալ մը ըլլալու որոշիչ նշանները կա՞ն : Թէ որ չէ, ուրիշ որ և իցէ խոռվութենէն աւելի՝ աս խաղաղութենէն վախցիր. և գիտցիր որ մարմնաւոր խաղա-

զուժիւնը ընդհանրապէս ամենէն աւելի հոգին մեռցընող թշնամին կ'ըլլայ :

Եւ հիմա՝ ո՛վ խղճմանք, կատարէ քու պաշտօնդ : Խօսէ՛ աս գրուածները լսողներուն կամ կարդացողներուն՝ թէ՛ դուքսը և թէ՛ տան մէջ :

Թէ որ դուն աս նշաններէն անոր վրայ գանես, շատ պիղծ ըլլալը իրեն ըսելու ես : Բերանդ սուտ մի՛ առներ, Խաղաղութիւն է՝ մի ըսեր անոր, որուն որ Մտուած Խաղաղութիւն է չոսեր : Թո՛ղ բընաւ մէկ ցանկութիւն մը քեզ չհաճեցընէ . ո՛չ անձնասիրութիւնը՝ ոչ ալ մարմնաւոր նախապաշարումը քեզ կուրցընէ : Վարձի եկած է՞ անանկը, թէ չէ : Ըրդեօք ինք իր անձին որ և իցէ կերպով մեղքի թոյլտուութիւն կ'ընէ՞, թէ չէ : Ըմէն բանէն աւելի արդեօք ճշմարտապէս Մտուած կը սիրէ՞, անիկայ կը յարգէ՞, և անոր կը հաճի՞, ու անով կը զուարճանայ՞, թէ չէ : Մեղքին ինչ ըլլալուն վրայ սրտանց բողբոլին համոզուե՞ր է . ինք իր անձին վրայ ունեցած բոլոր ապաւինութիւնը մէկ դի ձգե՞ր, ու ինք իր անձը մեղքէն հանելով՝ ինքզինքը բողբոլին Տէր Յիսուս Քրիստոսի տուե՞ր է : Կամ թէ՛ մինչև աս օրս տգիտութեան իշխանութեանը տակը կը դրուներս . կամ պղծութեան տիղմին մէջ, կամ ազօթքէ հեռու, Մտուած չճանչցող, Մտուածոյ՛ խօսքին զանցառութիւն ընող, ու աս ներկայ աշխարհս սիրող : Իր սիրտը շարութեամբ եռացող, կամ ցանկութեամբ այրող, կամ իր ազահութեանը ետեւէն գացող կը գտնես : Ուրեմն մէկ դի գիր անիկայ . իր բաժինը սրբոց հետ չէ . պէտք է որ վերստին ծնանի, պէտք է որ դարձի դայ, ու Յիսուս Քրիստոսով նոր ստեղծուած մը ըլլայ . ապա թէ ոչ՝ չկրնար երկինք մտնել :

Ըմեն դարձի չեկող հոգւոյն վիճակը անանկ անպատմելի կերպով սոսկալի է՝ որ եթէ մէկը միայն կարող ըլլայ դեռ դարձի չեկած ըլլալուն վրայ մարդիկը համոզելու, անմիջապէս պիտի որոչէին որ դարձի գալու գործը լմննալու է: Իսոյց շարքացած անձին վրայ անանկ դանդաղութեան և թմրութեան հոգի մը կը տիրէ՝ որ թէպէտ և դարձի չեկած ըլլալուն վրայ համոզուի, սակայն և այնպէս տակաւին անհոգ կը մնայ. և աշխարհային հոգերով ու գործերով, կամ զգայական հեշտութիւններով, ապականեալ ցանկութիւններով և ցած փափաքներով խղճմտանքին ձայնը կ'ընկզմի. և մեղաւորները՝ քանի մը պաղ փափաքներ ունենալու, և զղջումի գալու և աղէկնալու ընդհանուր դիտաւորութենէն անդին չեն անցնիր: Աւստի ջանք կ'ընեմ ցոյց տալու քեզի,

Գ. Ընդարձ Ընդհան Բնասանութիւնը:

1. Ընդհան Ընդհան քեզի դէմ է՝ քանի որ վերստին ծնած ու նորոգուած չես: Եւ հաւատա որ՝ կենդանի Ըստուծոյ ձեռքը իյնալը շատ սոսկալի բան մը ըլլալը, իր արդար բարկութիւնը քեզի դէմ բորբոքած ատենը պիտի յայտնուի: Ըստուծոյ պէս բարեկամ մը չկայ, ոչ ալ անոր պէս թշնամի մը: Արջափ որ երկինքը երկրէն բարձր է, այնչափ ալ որ և իցէ աշխարհային նեղութեան մէջ իյնալէն աւելի սոսկալի պիտի ըլլայ կենդանի և բարկացեալ Ըստուծոյ ձեռքն իյնալը: Շատ շանցած բուն Ըստուած ինքը պիտի ըլլայ քեզ տանջողը. քու կորուստդ Տէրոջը ներկայութենէն պիտի գայ: Տօփեթը՝ պատժոյ տեղը՝ խորունկ և լայն է. անոր դէզը կրակ և շատ փայտ է. ու անիկայ Տ'րոջը շունչը ծծումբի հեղեղի պէս պիտի բռնկցընէ: Եսայ. Լ. 33: Եւ թէ որ

Լստուած քեզի դէմ ըլլայ, ո՞վ պիտի ըլլայ քու կողմէդ: Թէ որ մարդ մը Տէրոջը դէմ մեղք գործէ, անոր համար, ո՞վ աղաչանք պիտի ընէ: Ա թագ. Բ. 25: Մեղաւոր՝ Լստուած քու թըշնամիդ ըլլալը ընելդ, քու սրտիդ դաշոյնի մը պէս չմտիր: Ո՛հ դուն ո՞ւր պիտի երթաս: Գուն քեզ ո՞ւր պիտի ծածկես Վեղի յոյս չկայ՝ մինչև որ քու ղէնքերդ վար չձգես և թողութիւն չխընդրես, ու Վրիստոս քեզի բարեկամ ու քու խաղաղութիւնդ չընես: Ողորմութիւն և փրկութիւն կ'առաջարկուի քեզի հիմա անոր միջոցովը: Բայց թէ որ դուն քու մեղքերդ չձգես ու բոլորովին Տէրոջը չդառնաս, Լստուծոյ բարկութիւնը քու վրայ կը մնայ, ու քեզի դէմ ըլլալը կ'իմացընէ Ազի կիէլ մարգարէին ձեռքովը. «Լ'նոր համար Տէր Նոյան այսպէս կ'ըսէ. Լ'հա ես քեզի դէմ եմ»:

2. Բուր եր սորոգելէն երբ Ինչ Դէմ է: Ի Լ'բարոյնիւնը վառեալ բոցափայլ սուրի պէ քեզի դէմ պատեանէն դուրս ելած է: «Թէ՛ փայլակի պէս սուրս սրեմ, ու ձեռքս դատաստանի երկնցընեմ, իմ թշնամիներուս վրէժխնդրութիւն պիտի ընեմ, և իս ատողներուն հատուցում ընեմ: Իմ նետերս արիւնով պիտի արբեցընեմ»: Բ Օրէն. ԼԲ. 41, 42: Լստուածային արդարութիւնը շատ ճիշդ է. մինչև վերջին լուսան ամբողջ հատուցուելու է. բարկութիւն և սրտմտութիւն կը սպառնայ, նեղութիւն և տառապանք՝ ամէն մարդու վրայ որ չար կը գործէ: Լստուած. Բ. 9: Կ'անիծէ «Լ'մէն մարդ որ Օրէնքին գիրքը ամէն գրուածներուն մէջ չկենար՝ որ անոնք կատարէ»: Գաղ. Գ. 10: Լ'ն մեղաւորը՝ որ տակաւին թողութիւն չէ ստացած, և կը զգայ իր թշուառութիւնը, անանկին՝ Լստուծոյ արդա-

բուժիւնը, աւագակին՝ Գատաւորին դիմացը ելլելէն, և ատեանին առջևը ներկայանալէն, կամ մահապարտին՝ դահիճին սուրը, և կամ կախաղանը տեսնելէն աւելի սոսկալի է: Արբոր անսահման Արդարութիւնը կենաց կամ մահուան վճիռ տալու կը նստի, ո՛հ ինչ սարսափելի բան կ'ըլլայ թշուառ մեղաւորին վիճակը: «Ապացե՛ք ասոր ոտքերը և ձեռքերը, և առէ՛ք ու հանեցէ՛ք անիկայ դուրսի խաւարը. հոն պիտի ըլլայ լալ՝ ու ահուաներ կճոցընել»: Մատթ. ԻԲ. 13: «Մէկ դի՛ գացէք ինձմէ անիծեալներ՝ յաւիտենական կրօնի մէջը»: Մատթ. ԻԵ. 41 Մտածէ՛ ասոնց յո՛ր աս քու դատուելու խիստ արդարութեանդ մեմատ. և ինչպէս որ կենդանի է Տէր Աստուծո՛ւմ՝ աս մահուան վճիռը քեզի դէմ տրուիլը պիտի լսես, թէ որ շուտով դարձի չգաս ու վերջապիս չծնիս:

Անսահման մեծութիւն ունեցող Աստուծոյ զօրութիւնը քեզի դէմ է: Իր զօրութեան փառքը պիտի յայտնուի անոնց զարմանալի «Մատակումովը» որ Աստուած չին ճանչնար ու Աւետարանին չեն հնազանդիր»: Բ թ. Ե. Ա. 8, 9: Իր զօրութիւնը պիտի յայտնէ անոնց տրուած պատիժներուն սաստիկութիւնովը: Լուս. Թ. 22: Աղէկ կ'ըլլար որ բոլոր աշխարհք քեզի դէմ գէնք առած ըլլային, քան թէ Աստուծոյ ամենակարող զօրութիւն: քեզի դէմ եղած ըլլար: Իր ձեռքէն փախչելու՝ իր բանտէն ազատելու հնարք չկայ: Անոր զօրութեանը որոտումը ո՛վ կրնայ իմանալ: Ապերջանիկ մարդը՝ անձամբ զգալովը պիտի հասկընայ որ, «Ղշթէ անոր հետ վիճաբանիլ ուղէ, հազարէն մէկուն չկրնար անոր պատասխան տալ: Անիկայ ուժով կարող է: Ո՛վ անոր դէմ իր սիր-

ար խտացուցեր ու յաջողութիւն գտեր է" : Յօփ . Թ . 3 , 4 : Եւ դուն ասանկ մէկ ամենակարող թշնամիի մը պիտի համարձակի՞ս գէժ ելլելու : Երգ իմացէք ասիկայ՝ կ'ըսէ ինքը "ՈՎ դուք Լստուած մոռցողներ , չըլլայ որ ձեզ պատում , և ազատող մըն ալ չգտնուի" : Սաղմ . Ծ . 22 : "Վայ անոր՝ որ իր Լրարչին հետ կը վիճի" : Եսայ . ԽԵ . 9 : Գիտցիր ասիկայ՝ ով մեղաւոր , սոսկալով՝ որ անսահման Լստուածոյ բոլոր ստորոգելիքները քու կորստեանդ համար երգում ըրածի պէս՝ մէկ տեղ կապակցեալ են : Եբբ . Գ . 18 : Եւ դուն ի՞նչ պիտի ընես : Ո՛ր պիտի փախչիս : Թէ որ Լմենատեսն Լստուած ուր որ ըլլաս կը գտնէ , դուն չես կրնար փախչիլ : Թէ որ ճշմարիտ և հաւատարիմն Լստուած՝ իր երգումը պիտի կատարէ , դուն պիտի կորսուիս . և թէ որ ամենակարողն Լստուած՝ քեզ տանջելու զօրութիւն ունի , դուն բոլորովին թշուառ պիտի ըլլաս՝ թէ մարմնով և թէ հոգեով , բոլոր յաւիտենականութեան մէջ՝ մինչև որ բոլոր սրտովդ Տէրոջը չդառնաս :

Քու բոլոր մեղքիդ յանցանորոշիւնը լեռան պէս վրագ դիպուած է : Գուն ասիկայ չես զգար , բայց աս է որ քու թշուառութիւնդ վրագ կը հաստատէ : Սեղքը՝ որչափ ալ որ հիմա թեթեւ բան մը համարես , որ մը պիտի հասկընաս որ շներուած մեղքին յանցաւորութիւնը անտանելի ծանր բեռ մըն է : Ո՛հ ի՞նչ ըրաւ անիկայ Լստուած և մարդ եղող Տիսուս Վրիստոսին : Իր երակներուն մէջէն անգամ արիւնը դուրս մղեց , և իր սիրտը փորին մէջ մոմի պէս հալեցուց : Սաղմ . ԻԲ . 14 : Եւ թէ որ կանաչ ծառին , այսինքն՝ սուրբ և անմեղ փրկչին՝ այնպէս ըրաւ , ինչ պիտի ընէ չոր

ծառին, այսինքն քեզի՝ մեղաւոր, և Մատուց դէմ յանցաւոր ապստամբիդ՝ որ չոր փայտի պէս, սպտուղ կրակին յարմար վառելի նիւթ մըն ես։ Ո՛հ ժամանակին աս քու վիճակիդ վրայ մտածէ։ Բրդեօք առանց դողալու կրնա՞ս աս սպանալիքներուն վրայ խորհիլ, «Չեր մեղսցը մէջ պիտի մեռնիք»։ Յօ՛ւ Ը. 21։ Ո՛հ, բանտի՛ ստորերկրեայ արգելանոցներու մէջ մեռնիլը աւելի աղէկ պիտի ըլլար՝ քան թէ քու մեղացդ մէջ մեռնիլը։ Թէ որ մահը՝ ինչպէս որ ստուգիւ բոլոր քու հանգստութիւններդ պիտի վերցընէ, անանկ ալ թէ որ քու մեղքերդ ալ վերցընէր, մեծ ազատութիւն պիտի ըլլար. բայց քու մեղքերուդ բոլորն ալ ետեւէդ պիտի գան՝ նոյն ատենը որ բոլոր բարեկամներդ քեզ կը ձգեն, և աշխարհային վայելքներդ ձեռքէդ կ'առնուին։ Մեղքիդ՝ բանտարկեալի մը պարտքերուն պէս, քու հետդ պիտի չմեռնին. այլ անոնք քու հետդ դատաստանի պիտի երթան, հոն՝ քու դատախազներդ ըլլալու. և անոնք ամէնը՝ քու հետդ դժոխք պիտի երթան, հոն՝ քեզ տանջողներն ըլլալու։ Ո՛հ նայէ ուրեմն ժամանակին պարտաւորութիւններուդ վրայ, թէ Մատուց պատուիրանքներուն ամէն մէկուն դէմ որչափ պարտք ունիս իր հաշիւին մէջ. և թէ՛ ինչպէս իր սուրբ օրէնքներուն ամէն մէկը՝ քեզ դատաւորին մատնելու պատրաստ են։ Մտածէ՛ ուրեմն թէ ի՞նչ պիտի ընես, երբոր անոնց բոլորը մէկէն քու վրայ իյնան։ Քու խղճմտանքիդ աշուրները բաց ասոր վրայ խորունկ մտածելու համար, մինչև որ դուն քեզմէ բոլորովին յուսահատիս՝ ու դէպ ՚ի Վրիստոս դիմելու, և ապաստանի տեղ գտնելու, և քու առջևդ դրուած յոյսը ամուր բռնելու համար իրեն վազե-

ըու ստիպուիս : Եբբ. 2. 18 :

Վու կատաղի ցանկո-նի-ննէրբ՝ քեզ թշուա-
 ոաբար գերի կ'ընեն : Վանի որ գարձի եկած
 չես, մեղքին բուն ծառան ես . քու վրայ կը տի-
 րէ անիկայ, ու իր իշխանութեանը ներքե կը
 պահէ քեզ՝ մինչև որ Մստուծոյ ուխտին կապանք-
 ներուն մէջ մտնես : Մեղքին պէս անգութ բռ-
 նուոր չկայ : Երգեօք մարդուն սիրար սաստիկ պի-
 տի չվիրաւորի՝ տեսնելով որ բազմաթիւ խեղճ ա-
 րարածներ կը վաղին և կը ճգնին, ամէնքն ալ
 իրենց այբելուն համար վառելիք նիւթ տանելու :
 Իայց սակայն մեղքի ծառայողներուն գործը աս
 է : Մինչև անգամ իրենց անիրաւ շահուն մէջ
 իրենք զիրենք օրհնողները՝ քանի որ կ'երգեն ու
 հեշտութեան մէջ կը յղիանան, անոնք իրենց
 վրայ միայն բարկութիւն և վրէժխնդրութիւն կը
 դիզեն . և իբրև թէ՛ եղ կը թափեն որ բոցը ա-
 ւելի սաստկանայ : Ո՞վ է որ պիտի ուզէ ասանկ
 տէրոջ մը ծառայելու՝ որ ասանկ տաժանելի գործ
 մը ունի, և որուն վարձքը մահ և կործանում է :
 Լուով. 2. 23 :

Թէպէտ և իղճորանք հիմա քնացած է, բայց
 երբոր մահն ու դատաստանը խելքդ գլուխդ բե-
 րէ՛ ան ատենը պիտի իմանաս ամէն մէկ հարուած-
 քին անհնարին սաստկութիւնն ու տառապանքը :
 Մեղաւոր ըլլալուն վրայ համոզուած մարդը, մեղ-
 քին թշուառ գերութեան աղէկ մէկ օրինակը
 կրնայ տալ : Խղճմտանքը իր վրան կը վազէ . ու
 անոր վախճանը ինչ ըլլալիքը իրեն կ'իմացնէ .
 բայց տակաւին անանկ գերի մըն է ինք իր ցան-
 կութիւններուն՝ որ բաց աչքով գահալէժ առաջ
 կ'երթայ, մինչև որ անհուն և յաւիտենական կո-
 րստեան մէջն իյնայ : Ի՞նչ կը խորհիս դուն՝ ո՞վ

մարդ, ո՛վ կին, յաւիտեանս յաւիտենից դժոխքին մէջ մնալուն վրայով: «Միժէ քու սիրտդ կրնա՞յ դիմանալ, կամ թէ ձեռքերդ կրնա՞ն ուժովնալ ան օրերը՝ որ ես ձեզի հասուցում պիտի ընեմ», կըսէ Օջրաց Տէրը: Լափող կրակին մէջ կրնա՞ք մնալ, երբոր բոլոր ձեր մարմինն ու հոգին սաստիկ կրակի մէջ տաքցած կայծեր հանող երկաթի պէս՝ բոլորովին Վստուծոյ ահաւոր վրէժխնդրութեան ձեռքը իյնան: Դուն մինչև անգամ իր մէկ մատին ուժին տակը կը ճնշիս, ու մեռնելդ ուզելու պատրաստ կ'ըլլաս. ուստի իր Վմենակարող բաղկացը ուժին դուն ինչպէ՞ս պիտի դիմանաս: Ի՞նչպէս պիտի դիմանաս, երբոր անմահութիւնը՝ քեզի թշուառութիւն, ու անբանի մը մահուամբ մեռնիլն ու ոչնչանալը՝ անանկ երջանկութիւն պիտի ըլլայ, որ բոլոր յաւիտենականութեան մէջի բաղձանքն ու Ավկիանոսի չափ արտասուքը՝ բնաւ ծախու առնելու կարող պիտի չըլլան: Ի՞նչ ար օրը հիմա կրնաս հեռացընել, ու խնդումի և զուարճութեան մէջ ըլլալ, և Տէրօջը երկիւղը մոռնալ. բայց դուն ի՞նչպէս պիտի դիմանաս՝ երբոր քեզ սանջանքներու մէջ ձգէ, ու անվախձան ցաւոց մէջ թողու: Մէկ խօսքով, երբոր «տանջանքին ծուխը ելլէ յաւիտեանս յաւիտենից», ու դուն բնաւ հանգիստ չունենաս՝ ոչ դիշեր ու ոչ ցերեկ, ոչ ալ խղճմտանքի հանգըստութիւն, ու ոչ ոսկորներուդ մէջ հանգըստութիւն՝ հապա մշտնջենաւորապէս զգուանք ու զարմանք և անէծք ու նախատինք ըլլաս: Ա՛հ մեղաւոր՝ անմիջապէս կեցիր և աս սոսկալի վիճակը միտքդ բեր: Բու աչուրներդ մի կուրցընելու կամաւ դուն քեզ մի խաբեր. տես քու ողբալի թշուառութիւնդ, քանի որ դեռ կրնաս առջևն

առնել. մտածէ թէ բարկութեան աման ըլլալը ինչ է, որուն մէջ Տէրը իր տանջողական բարկութիւնը պիտի թափէ՝ որչափ ասուն որ ինքը կենդանի է:

Եւ արդեօք ճշմարիտ է ասիկայ: Քու թշուառութիւնդ ասիկայ է: Եւ, ինչպէս որ Եստուծոյ էութիւնը ճշմարիտ է՝ անանկ ալ ասիկայ: Եղէկ է որ աշուրներդ բանաս ու հիմակուց տեսնաս՝ քանի որ դեռ դարման կրնաս ընել, քան թէ կուրցընես դուն քեզ ու կարծրացընես՝ մինչև որ քու յաւիտենական ցաւովդ զգաս ան բաները, որոնց որ առաջ չէիր ուզեր հաւատալ: Եւ քանի որ ասիկայ ճշմարիտ է, արդեօք այսպիսի պարագայի մը մէջ կուզես ժամաւաճառ ըլլալու անանալ: Ո՛հ երանի թէ արթնցընէի աս քնացողը: Ո՛վ է աս մարմինին մէջ բնակողը: Ինացականութիւն ունեցող բանական հոգի կայ արդեօք անոր մէջ: Ինանականութիւն ունեցող հոգի մը ըլլալով, այնչափ անբանութեան վիճակի հասած ես՝ որ քու անմահ ըլլալդ մոռնաս, ու երևակայես թէ դուն ալ անասուններուն պէս պիտի կորսուիս: Ո՛վ ապերջանիկ հոգի՝ դուն մարդոց փառքը, հրեշտակներուն ընկերը, ու Եստուծոյ պաակերն էիր. դուն՝ որ աշխարհիս մէջ Եստուծոյ երեսփոխանն էիր, ու երկրի վրայ եղած բոլոր ստեղծուածներուն մէջ գերագոյն պատիւ ունէիր, և քու Երարչիդ բոլոր գործքերուն վրայ իշխանութիւն: Եւ մա զգայարանաց գերի ու քու ախորժակիդ պէս ցած կուռքի մը ծառայ եղած ես. ու ան ալ չէ թէ գերագոյն երջանկութեան մը համար՝ այլ միայն փոքրիկ աշխարհ մը վաստակելու համար, որն որ քու հոգեւոր և անմահ բնութեանդ՝ փայտի տաշուքը և ազբը որ-

չափ որ յարմարութիւն ունին, ան ալ այնչափ ունի: Ո՛հ ինչո՞ւ չես խորհիր թէ յաւիտեանս ուր պիտի ըլլաս: Մասը մօտ է, Գատաւորը դրանք քովն է: Քիչ մը ատենէն ետեւ, ալ ժամանակ պիտի չմնայ: Եւ դուն քու անձդ վտանգի մէջ դնելով՝ ասանկ վիճակի մը մէջ պիտի շարունակե՞ս, որուն մէջ թէ որ բռնուիս՝ դուն անգարմանելի թշուառութեան մէջ պիտի իյնաս:

Ելի՛ր կանգնէ՛ մէկէն ՚ի մէկ, և փախի՛ր. փախելու միայն մէկ դուռ մը կայ, ու ան ալ դարձի գալուն նեղ դուռն է: Մինչև որ անկեղծաբար բոլոր քու մեղքերէդ չդառնաս, ու Յիսուս Քրիստոսի չգաս, ու անիկայ իբրև քու Մարգարէդ՝ Վահանագ և Թագաւորդ չընդունիս, և սրբութեան ու կենաց նորոգութեան մէջ չքալես, գիտցած եղիր որ՝ ինչպէս որ Տէրը կենդանի է, անանկ ալ քու անտարակոյս քանի մը օրէն կամ գիշերէն ետեւ՝ դժոխքէն դուրս ըլլալդ՝ անոր մէջն ըլլալէդաւելի սառցդ չէ: Ո՛հ ուրեմն Լստուծոյ հետ մի՛ հակառակիր: Լստալիսարէ՛ և դարձի՛ եկուր, ոչպէս զի ասոնց մէկը քու վրայ չգայ: «Տէրը փնտռեցէ՛ք, քանի որ անիկայ կը գտնուի. անիկայ կանչեցէ՛ք, քանի որ անիկայ մօտ է: Թո՛ղ ամբարիշտը իր ճամբայէն՝ ու անօրէն մարդը իր խորհուրդներէն հրաժարի, և Տէրոջը դառնայ, ու անիկայ պիտի ողորմի անոր. ու մեր Լստուծոյն, ինչու որ անիկայ առատապէս կը ներէ»: Եսայ՝ ԾԵ՝ 6, 7:

Թեպէտ և դարձի գալուն հարկաւորութեանը, և դարձի չեկողներուն թշուառութեանը վրայ մինչև հիմա ըսուածները բաւական կրնայ համարուիլ, որ խելքը գլուխը եղող մարդ մը՝ անմիջապէս Լստուծոյ դառնալու հաստատ որոշում ընե-

լու կ'առաջնորդէ, սակայն գիտնալով որ մարդոյս անկեալ վիճակին մէջ իր սիրտը ամէն բանէն աւելի խաբէբայ ու խիստ չար է, հարկաւոր կը սեպեմ անոնց վրայ յաւելցընել,

Ե. Դարձի գալու Կանի Վե ուրիշ շարժումներ :
 Լստուած՝ որ քեզ ստեղծեց, խիստ մեծ բարերարութեամբ քեզ կը հրաւիրէ : Իր ամենամարդասէր և ողորմած բնութիւնը՝ քեզ կը քաջալերէ իրեն գալու : Ինքը գթած, երկայնամիտ ու բազումսողորմ է : Սող. 22. 15 : Լսիկայ մէկ մեծ փաստ մըն է մեղաւորները համոզելու որ դարձի գան : «Ձեր Տէր Լստուծոյն դարձէք . վասն զի անիկայ ողորմած ու գթած, երկայնամիտ ու բազումսողորմ է» : Յով. Բ. 13 : Իր քաջալերական կոչումներն ու խոստումները ձեզ կը հրաւիրեն : Ո՛հ՝ ողորմութիւնը ձեզի ինչպէս սաստիկ թախանձող մըն է : Ձեր ետեւէն ինչպէս սիրով կը կանչէ . «Դարձի՛ր ս'վ ապստամբ Իսրայէլ՝ կ'ըսէ Տէրը . իմ բարկութիւնս ձեր վրայ չեմ թափեր . քանզի ես ողորմած եմ, կ'ըսէ Տէրը . յաւիտեան ռի չեմ պահեր . միայն թէ քու անօրէնութիւնդ ճանչցիր . Ո՛վ ապստամբ որդիք՝ դարձէք, ես ձեր ապստամբութիւնները կը բժշկեմ» : Երեմ. Գ. 12, 13. 22 : Ո՛հ ինչպէս ողորմութեան ամօրիչ խօսքեր են : Եւ արդեօք քու սիրտդ անոնցմով չ'հալիր : Ո՛հ, երանի թէ այսօր անոր ձայնը մտիկ ընէիր ու հնազանդէիր :

Քեզի քաջալերութիւն տալու համար պէտք է աս ալ իմացընեմ որ՝ եթէ հիմա դուն Տէրոջը դառնաս, ինքը քեզի անմիջապէս խիստ մեծ աբորձումներ պիտի տայ : Ինքը պիտի ազատէ քեզ՝ բազմաժամանակեայ մեղքերուդ ամէն զօրութիւնէն : Սատանային զօրութեանէն, ու աս ներ-

կայ չար աշխարհիս չարիքներէն ալ: Յաջողութիւնը՝ քեզի վնաս պիտի չընէ, ու ձախորդութիւնը՝ քու օգուտիդ համար պիտի ըլլայ: Ինքը քեզ ժամանակին՝ գերեզմանին զօրութենէն ալ պիտի ազատէ, ու «Օջարհուրանաց թագաւորը», քեզի խաղաղութեան աւետաբերի մը պէս պիտի ընէ: Օրէնքին քեզ կալանաւոր բռնելէն պիտի փրկէ, ու անէծքը՝ քեզի օրհնութեան պիտի փոխուի: Ինքը քեզ չէ թէ միայն թշուառութենէ պիտի ազատէ, այլ նաև ամենառատ բարիքներ պիտի շնորհէ: Վեզի պիտի ընծայէ ինքզինքը, ու քեզի բարեկամ և հայր պիտի ըլլայ. ինքը արև ու վահան պիտի ըլլայ քեզի. մէկ խօսքով, ինքը քեզի Լստուած պիտի ըլլայ: Ու ասկէ աւելի ի՞նչ կրնայ ըսուիլ: Վու մարմնոյդ վրայ խօսելով՝ քեզի աղէկ՝ հարկաւոր և պատշաճ եղած որ և իցէ աղէկ բանէ քեզ ամենեւին պիտի չզրկէ: Իսկ քու հոգւոյդ վրայ խօսելով՝ քու մեղացդ թողութիւն պիտի տայ, քու անձդ ու ծառայութիւններդ պիտի ընդունէ, քու աղօթքներդ պիտի լըսէ, ու անոնց պիտի պատասխանէ. քեզի փառաց ժառանգութիւն պիտի տայ, ու քեզ՝ իր շնորհքովն ու Սուրբ Հոգիովը անոր պիտի յարմարցընէ:

Զ. Թէ որ դուն հիմա գարձի դալու կարօտ ըլլալդ կ'իմանաս, ու անոր կը փափաքիս, ես աս տեղ բոլորը կը վերջացընեմ՝ անիկայ ձեռք բերելու համար՝ մէկ քանի իրապնէր ալ յաւելցընելով:

1. Վու մեղացդ վրայ պէտք եղած զգացումը սրտովն: Մինչև որ յոգնած ու ծանրաբեռնած չըլլաս ու մեղքէն ձանձրանաս, հանգիստ ու բըժըշկութիւն դտնելու համար Վրիստոսի պիտի չը-

գաս : Խորհրդածութիւն ըրէ ուրեմն քու մեղացդ
 թուոյն վրայ : Դաւիթին սիրտը կտարեցաւ ասոր
 վրայ մտածելուն : Ետի՛դ նայէ՛ ու տես թէ՛ ո՞ր
 տեղն ու ո՞ր ժամանակն էր ան , որ դուն մեղք
 չգործեցիր : Եւրտդ նայէ՛ և տես թէ՛ մարմնոյդ
 կամ հոգւոյդ մէջ ո՞ր մասը կամ ո՞ր կարողու-
 թիւնը կը գտնաս , որ մեղքով թունաւորեալ չէ :
 Ո՞ր պարտքդ կատարեցիր՝ որ անօրէնութիւնով
 ապականած չէր : Ո՛հ ինչ մեծ է քու մեղացդ
 թիւը : Քու հոգիդ որ կը սիրես՝ բարեկամս ,
 մեղքը չնչին կամ թեթեւ բանի տեղ մի դներ :
 Մեղքին բնութիւնը սորվէ , մինչև որ սկսի քու
 սիրտդ վախնալ և անկէ զղուիլ : Քու մասնաւոր
 մեղքերուդ ծանրութեանք վրայ խորհրդածութիւն
 ըրէ , թէ ինչպէս Աստուծոյ բոլոր տուած խրատ-
 ներուն ու պատուիրանքներուն և ողորմութիւն-
 ներուն դէմ մեղանչեցիր : Եղոր քու աղօթքնե-
 րուդ ու խոստմունքներուդ , որոշումներուդ ու սգա-
 լուդ , պարտաւորութեան ուխտերուդ և հնազան-
 դութեան դէմ ալ : Քու սիրտդ սաստիկ մեղադ-
 րես աս բաներուն համար , մինչև որ ամօթով
 ըլլայ՝ ու դուն քու վրայ ալ չմեծամտիս : Խոր-
 հրդածութիւն ըրէ թէ քու մեղքիդ ինչ կը վայ-
 լէ : Ան երկինքն ՚ի վեր քեզի դէմ վրէժխնդրու-
 թիւն կ'աղաղակէ : Իր արժանաւոր վարձքը մահ
 է : Աստուծոյ անէծքը՝ քու հոգւոյդ ու մարմնոյդ
 վրայ կը բերէ : Խօսքով կամ մտածութիւնով ե-
 դած ամենաթեթեւ մեղքը՝ քեզ Ամենակարող Աս-
 տուծոյ անհուն բարկութեանը տակ կը ձգէ : Ո՛հ
 ուրեմն ինչ բարկութեան , ինչ ծանր անէծքի ,
 ինչ սոսկալի վրէժխնդրութեան արժանաւոր կ'ըլ-
 լան քու միլիոնաւոր մեղքերդ : Ամեն մեղքերէդ
 վեր , քու միտքդ՝ քու բնութեանդ մեղքին վրայ

Հաստատէ: Սորվէ թէ որչափ խորունկ, որչափ տևողական, որչափ ընդհանուր է քու բնական ապականութիւնդ: Աս է որ քեզ ամէն աղէկ բաներէն ետ կը բռնէ, ու ամէն գէշ բաներու դիւրամէտ կ'ընէ: Ասիկայ՝ քու սրտիդ կուրու-
թիւնն և ամբարտաւանութիւն, նախապաշարմունք և անհաւատութիւն բերաւ. քու կամացդ՝ շարունակ թշնամութիւն և յամառութիւն. քու յօժարութեանցդ՝ անկարգութիւն և անկանոնութիւն, քու խղճմտանքիդ՝ անզգայութիւն և անհաւատարմութիւն. մէկ խօսքով՝ ասիկայ քու հոգւոյդ ամէն մէկ զօրութիւնը կարգէն դուրս հանեց, և սրբութեան բնակարան մը ըլլալու տեղը՝ չարութեան լուալիք մը ըրաւ: Ասիկայ պղծեց և խանդարեց բոլոր քու անդամներդ, ու անոնք անիրաւութեան գործիք՝ ու մեղաց ծառայ ըրաւ: Աւ դուն՝ ալ պիտի խօսիս քու աղէկ սրտիդ վրայով: Ա՛հ բնական ապականութեանդ ախար՝ սաստիկ ծանր ու վտանգաւոր ըլլալուն վրայ խորհրդածութիւն ընելը բնաւ մի ձգեր, մինչև որ խորին պատկառանօք և ցաւով քու կուրծքդ ծեծես՝ և Յօրին պէս ինքզինքէդ զզուիս և հողի ու մոխիրի մէջ ապաշխարես:

Չ. Քանի ըրէ + ու ներկայ խնայողութեանդ վրայ խորին զգացում մը որդասորել սրտիդ: Մտածէ պառկելու ատենդ՝ թէ ես ինչ գիտեմ որ տանջանքներու մէջ պիտի չարթննամ. և արթննալու ատենդ ալ մտածէ որ կարելի չէ՞ թէ յաջորդ դիշերը վրայ չհասած անկողինդ դժոխքին մէջ ձրգես: Աւ ասանկ երկիւզալի վիճակի մը մէջ շարունակել կ'ուզես: Քեզ յաւիտենական թըշուառութեան խրկելու անյատակ անդունդին եզերքը դողդողալ՝ կայնիլ, և ամէն դէպքերուն ու

Տիւանդութիւններու ձեռք իյնալ: Վիցուք թէ
 դատապարտեալ մարդ մը՝ Վաբուդողոնոսորին
 սաստիկ վառած հնոցին վրայ մի միայն դերձանով
 մը կախուած ըլլայ՝ որուն ամէն բոլորէ փրկելը
 հնար է, քու սիրտդ անոր համար դող պիտի
 չելլէ՞ր: Եւհա՛ գուն ան մարդն ես: Եւսիկայ ճիշդ
 քու վիճակդ է, թէ որ տակաւին դարձի եկած
 չես: Եւ թէ որ քու կենացդ թելը կտրի, ինչ
 պիտի ըլլայ. (և չես ալ գիտեր՝ որ թերեւս կրնայ
 յաջորդ գիշերը կամ յաջորդ բոլորէն ըլլալ.) ո՞ր
 պիտի ըլլաս ան ատենը. ո՞ր տեղ պիտի իյնաս:
 Ո՛հ սորվէ ուրեմն քու թշուառութիւնդ, մինչև
 որ քու սիրտդ Քրիստոսի ազաղակէ այնպիսի
 ջերմեռանդութեամբ մը՝ ինչպէս որ խղղուող մարդ
 մը օգնութիւն, և վերաւորուած մը վերաբոյժ կը
 խնդրէ:

3. Քու մտքիդ մէջ խորունկ հաստատէ՛ որ
 դուն ինչպէս որ իրենց կարող չես: Մի խորհիր
 որ քու աղօթքդ՝ ճշմարտութեան խօսքը կարգա-
 լըդ, լսելդ, դաւանիլդ՝ կամ մինչև անգամ լա-
 լութեան մէջ յառաջանալդ՝ բեզ պիտի փրկէ:
 Իրաւ որ ասոնք ընելու հոգի դանելու ես. բայց թէ
 որ դուն անոնց վրայ յոյս դնես, պիտի կորսուիս:
 Թէ որ Քրիստոսէն զատ ուրիշով մը փրկութիւն
 յուսալդ կը շարունակես՝ որ ինքն է «Ճանապարհ,
 ճշմարտութիւն և կեանք», դուն մշտնջենաւորա-
 պէս կորսուած և կործանուած ես:

4. Եւսիկայէս յիշէ՛ + ու քուր մեղքերդ Տէրոջը դօ-
 րութեանը: Թէ որ ինչ և իցէ մէկ մեղքի մը սու-
 վորութիւն ընելու հակամիտիս, կը կորսուիս: Թէ
 որ չարութենէ չհրաժարիս, ունայն տեղը Քրիս-
 տոսէն փրկութիւն կը յուսաս: Մեղքերդ մէկգի
 ձգէ, եթէ ոչ՝ կարելի չէ որ ողորմութիւն գրա-

նես : Լուսի . ԻԸ . 13 : Մատնիչէն հրաժարէ , ապա
 թէ ոչ չես կրնար Լստուծոյ հետ խաղաղու-
 թիւն ունենալ : Գլուխդ Գալիլային ծնկանը վայ
 մի թողուր . դուն՝ կամ մեղքերէդ հրաժարելու
 ես , կամ հողիէդ . միայն մէկ մեղք մըն ալ թէ
 որ պահես , Լստուած քեզի պիտի չխնայէ Ընաւ
 պատճառանքներ մի ըներ . բու մեղքերդ մեռնե-
 լու են , ապա թէ ոչ դուն անոնց համար պիտի
 մեռնիս : Թէ որ մէկ մեղքի մը թոյլտուութիւն ը-
 նես , թէ և փոքրիկ ալ ըլլայ , գաղտնի ալ ըլլայ՝
 թէ և կարօտութիւն կայ կ'ըսես , և շատ մը
 պատճառանքներ ունենաս անոր համար , բու
 հողւոյդ կենդանութիւնը՝ ան մեղքին կենդանի
 մնալուն համար , զո՛հ պիտի երթայ . և արդեօք
 սուղ ծախու առնուած պիտի չըլլայ :

5. Տէր Յիսուս Վրիստոսը ընդունէ՝ իբրև
 քու Մարգարէդ , Վահանադ և թագաւորդ ,
 ինչպէս որ Լւետարանին մէջ քեզի առաջար-
 կուած է : Ով բարեկամս՝ մեղքով ինքզինքդ ա-
 պականցիր , բայց Յիսուս կարող է և կամեցող
 և պատրաստ՝ մինչև անգամ հիմա քեզի օգնելու :
 Ինքը ձրիապէս քեզ փրկել կ'առաջարկէ : Ուստի
 այսօր քեզի վկայութիւն կու տամ՝ որ եթէ դուն
 կորսուելու ըլլաս , չէ թէ քեզի համար փրկիչ մը
 պատրաստուած չըլլալուն համար է , կամ չէ թէ
 քեզի փրկութիւն առաջարկուած չըլլալուն , բայց
 անոր համար որ՝ շրեաներուն պէս , մարդասպան
 մը՝ քու փրկիչէդ , ու քու ցանկութիւններդ՝ Տէր
 Յիսուս Վրիստոսէն աւելի նախապատիւ սեպե-
 ցիր : Թէ և քու մեղքերդ չափազանց շատ ըլլայ
 ու մեծ ու երկար ատենէ 'ի վեր տեւած ալ ըլլայ ,
 սակայն թէ որ հիմա Լստուծոյ առաջարկութիւ-
 նը անզգամաբար ետ չձգես՝ քեզի թողութիւն պի-

տի ըլլայ, ու պիտի փրկուիս. վասն զի Տէր Աստուծոյն բերանը խօսեցաւ ասիկայ: Թէ որ կորսուելու ըլլաս, փրկութեան համար Քրիստոսի չգալուդ պատճառաւն է: Բայց ո՞չ քու հոգւոյդ համար ըլլայ, խելքդ գլուխդ բեր վերջապէս, և համոզուէ անիկայ ընդունելու իբրև քու Ամէնդ, քու Փրկիչդ՝ մեղքէ ու թշուառութենէ, Տէրոջ անունովը՝ ու Հոգւոյն զօրութիւնովը՝ մարմինի վրայ ունեցած բոլոր վստահութիւնդ մերժելով, ինքզինքդ անոր անպայման կերպով մը յարէ. ինքզինքդ սրտանց բոլորովին Տէրոջ ըլլալու ուստով միացուր, ու փառաւոր զինքը քու մարմնոյդ ու քու հոգւոյդ մէջ՝ որոնք իրենն են. ասանկով քեզի աս աշխարհին ու բոլոր յաւիտենականութեան մէջ ալ աղէկ պիտի ըլլայ, նոյն Յիսուս Քրիստոսի միջոցովը՝ որ մեր միակ Տէր և Փրկիչն է: Ամէն:

Վ. Ե. Բ.



887

0027663



2

